ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՓԱՍՏԱԲԱՆՆԵՐԻ ՊԱԼԱՏԻ
ԽՈՐՀՈՒՐԴ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ
Բողոքի քննությունը նիստի միջոցով իրականացնելու մասին

Հայաստանի Հանրապետության փաստաբանների պալատի (**այսուհետև՝ Պալատ**) խորհուրդը՝ նախագահությամբ Ցոլակ Մարգարյանի, խորհրդի անդամներ՝ Ռոման Ահարոնյանի, Ռուբեն Հակոբյանի, Դավիթ Վարդիկյանի, Պավել Գյուլումյանի, Թամարա Բաղդասարյանի, Արսեն Հարությունյանի, Մարինե Ֆարմանյանի, Վարազդատ Հարությունյանի, Լիլիթ Ղազանչյանի և Էմին Բեգլարյանի,

քննության առնելով փաստաբան Հովհաննես Վլադիմիրի Խուդոյանի միջնորդությունը՝ կարգապահական գործով ներկայացված բողոքի քննությունը նիստի միջոցով իրականացնելու վերաբերյալ,

Պ Ա Ր Զ Ե Ց՝

ՀՀ փաստաբանների պալատի կարգապահական հանձնաժողովի 18.03.2026թ. թիվ ԿԳ-25089-2-Ա որոշմամբ Հովհաննես Վլադիմիրի Խուդոյանի (արտոնագիր՝ թիվ 2040) նկատմամբ կիրառվել է կարգապահական տույժ՝ նկատողություն՝ «Փաստաբանության մասին» օրենքի 19-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետի, ինչպես նաև Կանոնագրքի 2.2.2 ենթակետի խախտման համար:

Նշված որոշման դեմ 09.06.2026թ. փաստաբան Հովհաննես Խուդոյանի կողմից ներկայացվել է բողոք, որով վերջինս խնդրել է բեկանել ՀՀ փաստաբանների պալատի կարգապահական հանձնաժողովի 18.03.2026թ. թիվ ԿԳ-25089 որոշումը:

Բողոքը սահմանված կարգով ուղարկվել է մյուս կողմին՝ բողոքի պատասխան ներկայացնելու նպատակով:

Փաստաբան Հովհաննես Խուդոյանը ներկայացրել է նաև միջնորդություն՝ բողոքի քննությունը նիստի միջոցով իրականացնելու վերաբերյալ:

ՀՀ փաստաբանների պալատի խորհրդի գործունեության կարգի 60-րդ կետի համաձայն՝ բողոքարկման վարույթի շրջանակներում փաստաբանին կարգապահական պատասխանատվության ենթարկելու հարցի մասին փաստաբանների պալատի կարգապահական հանձնաժողովի որոշման դեմ բողոքը Խորհուրդը քննում և դրա վերաբերյալ որոշումը կայացնում է գրավոր ընթացակարգով, բացառությամբ այն դեպքերի, երբ գալիս է

եզրահանգման, որ անհրաժեշտ է բողոքի քննությունն իրականացնել նիստի միջոցով:

Միաժամանակ, Խորհուրդը հաշվի է առնում, որ բողոքի քննությունը նիստի միջոցով իրականացնելու անհրաժեշտությունը յուրաքանչյուր դեպքում ենթակա է գնահատման՝ ելնելով տվյալ գործի բնույթից, բողոքի փաստարկներից, բողոքի պատասխանից, ներկայացված միջնորդության պատճառաբանություններից և գործի նյութերից:

Խորհուրդը ծանոթանալով բողոքի բովանդակությանը, ինչպես նաև գործի նյութերին՝ գալիս է այն եզրահանգման, որ տվյալ դեպքում առկա է բողոքի քննությունը նիստի միջոցով իրականացնելու անհրաժեշտությունը:

Ղեկավարվելով «Փաստաբանության մասին» օրենքի 39.11-րդ հոդվածով, Պալատի խորհրդի գործունեության կարգի 60-րդ, 71-րդ և 72-րդ կետերով՝ Հայաստանի Հանրապետության փաստաբանների պալատի խորհուրդը

Ո Ր Ո Շ Ե Ց

1. ***Փաստաբան Հովհաննես Խուդոյանի միջնորդությունը՝ բողոքի քննությունը նիստի միջոցով իրականացնելու վերաբերյալ, բավարարել:***
2. ***Հովհաննես Խուդոյանի կողմից ներկայացված բողոքի քննությունն իրականացնել նիստի միջոցով:***
3. ***Խորհրդի նիստը նշանակել 07.07.2026թ., ժամը 18:30-ին, Հայաստանի Հանրապետության փաստաբանների պալատի վարչական շենքում (ք. Երևան, Զաքյան 7-2, 4-րդ հարկ, թիվ 12 սենյակ):***
4. ***Սույն որոշման մասին ծանուցել փաստաբան Հովհաննես Խուդոյանին, ինչպես նաև Դիմողին:***

Ծանոթություն. Սույն որոշումը բողոքարկման ենթակա չէ:

Նիստի ժամանակի և վայրի մասին պատշաճ ծանուցված լինելու պայմաններում կողմերի չներկայանալն արգելք չէ բողոքի քննության համար:

ՀՀ փաստաբանների պալատի խորհրդի
կարգապահական գործով
նիստը նախագահող՝ **Ցոլակ Մարգարյան**

03 հուլիսի 2026թ.
թիվ ԿԳ/16-Ա
ք. Երևան